Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
ապրիլի 26 -ի N 495 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
ապրիլի 14-ի N 469-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Քաղաքացիական կացության ակտի գրանցման հիման վրա դիմողին տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայական (այսուհետ՝ պետական գրանցման վկայական)՝ համաձայն N 1 ձևի:

2. Պետական գրանցման վկայականը պատրաստվում է բացառապես Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով քաղաքացիական կացության ակտային գրանցում կատարելիս՝ ինքնաշխատ:

3. Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների կողմից պետական գրանցման վկայականը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգին համակցված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության էլեկտրոնային հյուպատոսական համակարգի միջոցով:

4. Պետական գրանցման վկայականի ձևաթղթի վերևի մասի կենտրոնում զետեղվում են Հայաստանի Հանրապետության զինանշանը և «ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ» բառերը, իսկ լրացման ենթակա տողերը արտատպվում են Հայաստանի Հանրապետության արդարադա-

տության նախարարությունում գործող քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

5. Պետական գրանցման վկայականը տրամադրվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող կամ վկայականի կրկնօրինակը տրամադրող մարմնի կնիքով և ղեկավարի ստորագրությամբ:

6. Պետական գրանցման վկայականի վրա ներքևի մասում զետեղվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով գեներացվող պետական վկայականի սերիան և համարը, ինչպես նաև իսկության ստուգման համար նախատեսված հատուկ համարանիշը և արագ արձագանքման (տեղեկացման) ծածկագիրը:

7. Պետական գրանցման վկայականի իսկության ստուգումը կարող է կատարվել սույն կարգի 6-րդ կետով ամրագրված հատուկ համարանիշը մուտքագրելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգման պաշտոնական կայքում կամ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները՝ արագ արձագանքման ծածկագրի միջոցով:

8. Սխալ լրացված պետական գրանցման վկայականները պահվում են տվյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող կամ վկայականի կրկնօրինակը տրամադրող մարմնում և ենթակա են սահմանված կարգով ոչնչացման:

Ձև N 1

ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ